ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.03.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/84

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ֆ. Մանգյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Էքսպորտ Օյլ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-7/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, քսուքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2911-2022 գրությամբ «Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 11.02.2022թ.-ի թիվ ՊՆ/02/687-2022 գրության հիման վրա, 18.02.2022թ.-ին «Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 18.02.2022թ.-ին:

21.02.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/84 համարի ծածկագիրը:

03.03.2022թ.-ին և 18.03.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 03.03.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 18.03.2022թ.-ին:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 11.02.2022թ.-ի թիվ ՊՆ/02/687-2022 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-7/6» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Էքսպորտ Օյլ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից):

Մասնակցի հայտը գնահատելիս գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն, մասնավորապես՝

- Մասնակցի կողմից ներկայացված հայտի հավելված 1.1-ում 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված էր ԳՕՍՏ 6267-74 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ: Անհրաժեշտ էր հստակեցնել ներկայացվող ապրանքը, բացառելով տարակերպ մեկնաբանությունը՝ նշելով կամ համապատասխան ԳՈՍՏ-ը կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ-ն: Արտադրող գործարանի համարժեք ՏՊ ներկայացնելու

դեպքում անհրաժեշտ էր ներկայացնել նաև այդ ՏՊ-ի կրկնօրինակը՝ համաձայն սույն ընթացակարգի հրավերի:

- Մասնակցի կողմից ներկայացված հայտի հավելված 1.1-ում 4-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված էր ԳՕՍՏ 8773-73 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ: Անհրաժեշտ էր հստակեցնել ներկայացվող ապրանքը, բացառելով տարակերպ մեկնաբանությունը՝ նշելով կամ համապատասխան ԳՈՍՏ-ը կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ-ն: Արտադրող գործարանի համարժեք ՏՊ ներկայացնելու դեպքում անհրաժեշտ էր ներկայացնել նաև այդ ՏՊ-ի կրկնօրինակը՝ համաձայն սույն ընթացակարգի հրավերի:

- Մասնակցի կողմից ներկայացված հայտի հավելված 1.1-ում 5-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված էր ԳՕՍՏ 16422-79 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ: Անհրաժեշտ էր հստակեցնել ներկայացվող ապրանքը, բացառելով տարակերպ մեկնաբանությունը՝ նշելով կամ համապատասխան ԳՈՍՏ-ը կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ-ն: Արտադրող գործարանի համարժեք ՏՊ ներկայացնելու դեպքում անհրաժեշտ էր ներկայացնել նաև այդ ՏՊ-ի կրկնօրինակը՝ համաձայն սույն ընթացակարգի հրավերի:

- Մասնակցի կողմից ներկայացված հայտի հավելված 1.1-ում 6-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված էր ԳՕՍՏ 9433-80 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ: Անհրաժեշտ էր հստակեցնել ներկայացվող ապրանքը, բացառելով տարակերպ մեկնաբանությունը՝ նշելով կամ համապատասխան ԳՈՍՏ-ը կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ-ն: Արտադրող գործարանի համարժեք ՏՊ ներկայացնելու դեպքում անհրաժեշտ էր ներկայացնել նաև այդ ՏՊ-ի կրկնօրինակը՝ համաձայն սույն ընթացակարգի հրավերի:

- Մասնակցի կողմից ներկայացված հայտի հավելված 1.1-ում 13-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված էր ԳՕՍՏ 3276-89 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ: Անհրաժեշտ էր հստակեցնել ներկայացվող ապրանքը, բացառելով տարակերպ մեկնաբանությունը՝ նշելով կամ համապատասխան ԳՈՍՏ-ը կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ-ն: Արտադրող գործարանի համարժեք ՏՊ ներկայացնելու դեպքում անհրաժեշտ էր ներկայացնել նաև այդ ՏՊ-ի կրկնօրինակը՝ համաձայն սույն ընթացակարգի հրավերի:

- Մասնակցի կողմից ներկայացված հայտում բացակայում էր հավելված 1.3-ը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը

մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հայտերի գնահատման նիստը և 01.02.2022թ. ծանուցել «Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ին սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու անհամապատասխանությունները:

02.02.2022թ. ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարի էլ. փոստին ստացվել է Մասնակցի կողմից ներկայացված անհամապատասխանությունների շտկման փաստաթղթերը, որոնց ուսումնասիրման արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունները՝

- Մասնակցի կողմից ներկայացված հավելված 1.3-ը հաստատված չէ էլեկտրոնային ստորագրությամբ:

- Մասնակցի կողմից ներկայացված հավելված 1.1-ում ընթացակարգի 13-րդ չափաբաժնի մասով նշված է ТУ У 20.5-32365441-112:2015, սակայն վերջինիս կողմից չի ներկայացվել այդ ՏՊ-ի կրկնօրինակը, իսկ ՏՊ-ի կրկնօրինակի փոխարեն ներկայացված փաստաթղթում (паспорт качества) նշված տվյալները չեն համապատասխանում ընթացակարգի հրավերով պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրին, մասնավորապես՝

- Մասնակցի կողմից վերը նշված փաստաթղթում (паспорт качества) բացակայում է ամրության սահմանը,

- Մասնակցի կողմից վերը նշված փաստաթղթում (паспорт качества) մեխանիկական մասնիկների մասնաբաժինը նշված է 0.025, այնինչ սույն ընթացակարգի հրավերով և Մասնակցի կողմից ներկայացված հավելված 1.1-ում նշված է մեխանիկական մասնիկների մասնաբաժինը՝ ոչ ավել 0.015%:

Հաշվի առնելով վերը նշված անհամապատասխանությունները և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, 07.02.2022թ. գնահատող հանձնաժողովը մերժել է «Էքսպորտ Օյլ» ՍՊԸ հայտը Ընթացակարգի 6-րդ, 7-րդ և 12-րդ չափաբաժինների մասով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-7/6» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 21.02.2022թ.-ի գրությամբ դիմել է «Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2911-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

«Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ն 16.03.2022թ.-ին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2022/84 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-7/6» ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.02.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության՝ «Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում, մասնավորապես՝ Հավելված 1.1-ում առկա են անհամապատասխանություններ և բացակայում է Հավելված 1. 3 /տես՝ թիվ 3 արձանագրություն/.

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին 01.02.2022թ. ծանուցվել է մասնակիցներին՝ առաջարկելով Կարգի 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ներկայացված շտկման ծանուցմամբ նշվել է հետևյալը.

- «Ձեր կողմից ներկայացված հայտի հավելված 1.1-ում 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է ԳՕՍՏ 6267-74 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ: Անհրաժեշտ է հստակեցնել ներկայացվող ապրանքը, բացառելով տարակերպ մեկնաբանությունը՝ նշելով կամ համապատասխան ԳՈՍՏ-ը կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ-ն: Արտադրող գործարանի համարժեք ՏՊ ներկայացնելու դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև այդ ՏՊ-ի կրկնօրինակը՝ համաձայն սույն ընթացակարգի հրավերի:

- Ձեր կողմից ներկայացված հայտի հավելված 1.1-ում 4-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է ԳՕՍՏ 8773-73 կամ արտադրող գործարանի

համարժեք ՏՊ: Անհրաժեշտ է հստակեցնել ներկայացվող ապրանքը, բացառելով տարակերպ մեկնաբանությունը՝ նշելով կամ համապատասխան ԳՈՍ-ը կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ-ն: Արտադրող գործարանի համարժեք ՏՊ ներկայացնելու դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև այդ ՏՊ-ի կրկնօրինակը՝ համաձայն սույն ընթացակարգի հրավերի:

- Ձեր կողմից ներկայացված հայտի հավելված 1.1-ում 5-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է ԳՕՍ 16422-79 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ: Անհրաժեշտ է հստակեցնել ներկայացվող ապրանքը, բացառելով տարակերպ մեկնաբանությունը՝ նշելով կամ համապատասխան ԳՈՍ-ը կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ-ն: Արտադրող գործարանի համարժեք ՏՊ ներկայացնելու դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև այդ ՏՊ-ի կրկնօրինակը՝ համաձայն սույն ընթացակարգի հրավերի:

- Ձեր կողմից ներկայացված հայտի հավելված 1.1-ում 6-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է ԳՕՍ 9433-80 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ: Անհրաժեշտ է հստակեցնել ներկայացվող ապրանքը, բացառելով տարակերպ մեկնաբանությունը՝ նշելով կամ համապատասխան ԳՈՍ-ը կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ-ն: Արտադրող գործարանի համարժեք ՏՊ ներկայացնելու դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև այդ ՏՊ-ի կրկնօրինակը՝ համաձայն սույն ընթացակարգի հրավերի:

- Ձեր կողմից ներկայացված հայտի հավելված 1.1-ում 13-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է ԳՕՍ 3276-89 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ: Անհրաժեշտ է հստակեցնել ներկայացվող ապրանքը, բացառելով տարակերպ մեկնաբանությունը՝ նշելով կամ համապատասխան ԳՈՍ-ը կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ-ն: Արտադրող գործարանի համարժեք ՏՊ ներկայացնելու դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև այդ ՏՊ-ի կրկնօրինակը՝ համաձայն սույն ընթացակարգի հրավերի:

- Ձեր կողմից ներկայացված հայտում բացակայում է Հավելված 1.3-ը»:

«Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում անհամապատասխանությունները շտկվել են, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից 07.02.2022թ. արձանագրվել է, որ մասնակցի կողմից ամբողջությամբ չեն շտկվել և որոշում է կայացվել մերժել ՍՊԸ-ի հայտը:

Մասնավորապես, արձանագրվել է հետևյալը.

«1. Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.3 ստորագրված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

2. Հավելված 1.1-ում 13-րդ չափաբաժնի մասով նշված է ТУ У 20.5-32365441-112:2015, սակայն վերջինիս կողմից չի ներկայացվել այդ ՏՊ-ի կրկնօրինակը, իսկ ՏՊ-ի կրկնօրինակի փոխարեն ներկայացրած փաստաթղթում (паспорт качества) նշված տվյալները չեն համապատասխանում ընթացակարգի հրավերով պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրին, մասնավորապես՝

- *Մասնակցի կողմից վերը նշված փաստաթղթում (паспорт качества) բացակայում է ամրության սահմանը:*
- *Մասնակցի կողմից վերը նշված փաստաթղթում (паспорт качества) մեխանիկական մասնկիների մասնաբաժինը նշված է 0, 025, այնինչ սույն ընթացակարգի հրավերով և Մասնակցի կողմից ներկայացված հավելված 1.1-ում նշված է մեխանիկական մասնկիների մասնաբա-ինը՝ ոչ ավելի 0.015%»:*

Այնուհետև, ՀՀ պաշտպանության նախարարությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի պահանջներով, ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ ներկայացրել է ՝«Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը,կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատաս-խանությունը:

Ինչպես արդեն հայտնել ենք, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-7/6» ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.02.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության՝«Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում, մասնավորապես՝ Հավելված 1.1-ում առկա են անհամապատասխանություններ և բացակայում է Հավելված 1. 3 /տես՝ թիվ 3 արձանագրություն/.

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամպատասխանությունների մասին ծանուցվել է մասնակիցներին՝ առաջարկելով Կարգի 41-րդ կետի պահանձների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

«Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում անհամապատասխանությունները շտկվել են, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ մասնակցի կողմից ամբողջությամբ չեն շտկվել և որոշում է կայացվել մերժել ՍՊԸ-ի հայտը.

Գտնում ենք, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը «Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելով՝գործել է ոչ իրավաչափ՝հետևյալ հիմնավորմամբ.

- *Նախ և առաջ, Հավելված 1.3 էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված չլինելու կապակցությամբ հայտնում ենք, որ մասնակցի ողջ հայտը հաստատված է եղել էլ. թվային ստորագրությամբ, այդ թվում նաև ուղարկված շտկումները, իսկ Հավելված 1.3՝ "Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը", տեխնիկական խնդրի պատճառով հաստատված չէ էլ. թվային ստորագրությամբ՝ հաշվի առնելով, որ այն կցվում է բոլոր մասնակցության հայտերին: Գտնում ենք, որ նման պարագայում այս հիմքով հայտը մերժելը հանդիսանում է ձևական վարչարարություն:*

2. Հայտը մերժելու երկրորդ հիմքը վերաբերվում է Հավելված 1.1-ի 13-րդ չափաբաժնին: Այս մասով գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ նշված է ТУ У 20.5-32365441-112:2015, սակայն վերջինիս կողմից չի ներկայացվել այդ ՏՊ-ի կրկնօրինակը, իսկ ՏՊ-ի կրկնօրինակի փոխարեն ներկայացրած փաստաթղթում (паспорт качества) նշված տվյալները չեն համապատասխանում ընթացակարգի հրավերով պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրին, մասնավորապես՝

- *Մասնակցի կողմից վերը նշված փաստաթղթում (паспорт качества) բացակայում է ամրության սահմանը:*
- *Մասնակցի կողմից վերը նշված փաստաթղթում (паспорт качества) մեխանիկական մասնկիների մասնաբաժինը նշված է 0, 025, այնինչ սույն ընթացակարգի հրավերով և Մասնակցի կողմից ներկայացված հավելված 1.1-ում նշված է մեխանիկական մասնկիների մասնաբաժինը՝ ոչ ավելի 0.015%»:*

Այս կապակցությամբ բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ մի քանի հանգամանք.

Նախ և առաջ գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի կողմից պահանջված շտկումը եղել է ոչ իրավաչափ: Մասնավորապես, գնահատող հանձնաժողովը շտկման ծանուցմամբ նշել է, որ ՍՊԸ-ի ներկայացված հայտի հավելված 1.1-ում 13-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է ГОUS 3276-89 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ: Հանձնաժողովը պահանջել է հստակեցնել ներկայացվող ապրանքը, բացառելով տարակերպ մեկնաբանությունը՝ նշելով կամ համապատասխան ГՈUS-ը կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ-ն:

Սակայն «Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ի կողմից ի սկզբանե հայտով 13-րդ չափաբաժնով ներկայացվել է Ընթացակարգի հրավերին համապատասխան տեղեկատվություն, և նման պարագայում շտկում պահանջելը եղել է ոչ իրավաչափ: Նման ոչ իրավաչափ շտկման

արդյունքում մասնակիցը ստիպված է եղել փոխել ներկայացված տեղեկատվությունը, որն իր հերթին հանգեցրել է հայտը մերժելուն:

Բացի այդ, բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ի կողմից 13-րդ չափաբաժնով ներկայացված շտկված Հավելված 1.1-ում առկա տեխնիկական բնութագիրը ամբողջությամբ համապատասխանում է Հրավերի տեխնիկական բնութագրին /իդենտիկ կրկնում է հրավերի պահանջները/: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը անհամապատաս-խանության վերաբերյալ եզրահանգումը արել է բացառապես ուսումնասիրելով կցված փաստաթուղթը՝ паспорт качества: Սակայն գտնում ենք, որ եթե ՍՊԸ-ն ներկայացված տեխնիկական բնութագրով հավաստիացրել է, որ կմատակակարի Հրավերով պահանջված ապրանքը, ապա Ընթացակարգի այս փուլում մասնակցի հայտը չպետք է մերժվեր:

Բացի այդ, պետք է փաստել, որ արտադրողները հաճախ սարքավորումներ են արտադրում պատվիրատուի կողմից հանձնարարված կոնկրետ պարամետրերով: Այլ կերպ ասած, եթե ՍՊԸ-ն լրացված Հավելված 1.1-ով՝ 13-րդ չափաբաժնով, պարտավորվել էր մատակարարել հրավերի պահանջներին համապատասխանող ապրանք, ապա դրա անհամապատասխանությունը կարելի էր փաստել բացառապես ապրանքը մատակարարելու և տեղադրելու փուլում, երբ տեսանելի լիներ տվյալ սարքավորումը և ակնհայտ դառնար դրա անհապատասխանությունը: Սայան այս փուլում, երբ ապրանքը առկա չէ, իսկ ներկայացված տեխնիկական բնութագիրը իդենտիկ կրկնում է Ընթացակարգի հրավերի պահանջները, գտնում ենք, որ անհամապատասխանայության վերաբերյալ արված եզրահանգումը վաղ է:»:

Ելնելով վերոգրյալից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները և Ընկերության դրսևորած վարքագիծը՝ «Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձ¬նած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2022/84 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից քսուքների ձեռքբերման նպատակով 17.01.2022թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-7/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-7/6» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ՝ կից ներկայացնելով «Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայլ Հավելված 1.1-ի:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 01.02.2022թ.-ին նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 2.3-րդ ենթակետի համաձայն՝ Մասնակցի հայտը գնահատելիս գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- Մասնակցի կողմից ներկայացված հայտի հավելված 1.1-ում 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված էր ԳOUS 6267-74 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ: Անհրաժեշտ էր հստակեցնել ներկայացվող ապրանքը, բացառելով տարակերպ մեկնաբանությունը՝ նշելով կամ համապատասխան ԳՈՍՏ-ը կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ-ն: Արտադրող գործարանի համարժեք ՏՊ ներկայացնելու դեպքում անհրաժեշտ էր ներկայացնել նաև այդ ՏՊ-ի կրկնօրինակը՝ համաձայն սույն ընթացակարգի հրավերի:

- Մասնակցի կողմից ներկայացված հայտի հավելված 1.1-ում 4-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված էր ԳOUS 8773-73 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ: Անհրաժեշտ էր հստակեցնել ներկայացվող ապրանքը, բացառելով տարակերպ մեկնաբանությունը՝ նշելով կամ համապատասխան ԳՈՍՏ-ը կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ-ն: Արտադրող գործարանի համարժեք ՏՊ ներկայացնելու դեպքում անհրաժեշտ էր ներկայացնել նաև այդ ՏՊ-ի կրկնօրինակը՝ համաձայն սույն ընթացակարգի հրավերի:

- Մասնակցի կողմից ներկայացված հայտի հավելված 1.1-ում 5-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված էր ԳOUS 16422-79 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ: Անհրաժեշտ էր հստակեցնել ներկայացվող ապրանքը, բացառելով տարակերպ մեկնաբանությունը՝ նշելով կամ համապատասխան ԳՈՍՏ-ը կամ արտադրող

գործարանի համարժեք ՏՊ-ն: Արտադրող գործարանի համարժեք ՏՊ ներկայացնելու դեպքում անհրաժեշտ էր ներկայացնել նաև այդ ՏՊ-ի կրկնօրինակը՝ համաձայն սույն ընթացակարգի հրավերի:

- Մասնակցի կողմից ներկայացված հայտի հավելված 1.1-ում 6-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված էր ԳՕՍՏ 9433-80 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ: Անհրաժեշտ էր հստակեցնել ներկայացվող ապրանքը, բացառելով տարակերպ մեկնաբանությունը՝ նշելով կամ համապատասխան ԳՈՍՏ-ը կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ-ն: Արտադրող գործարանի համարժեք ՏՊ ներկայացնելու դեպքում անհրաժեշտ էր ներկայացնել նաև այդ ՏՊ-ի կրկնօրինակը՝ համաձայն սույն ընթացակարգի հրավերի:

- Մասնակցի կողմից ներկայացված հայտի հավելված 1.1-ում 13-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված էր ԳՕՍՏ 3276-89 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ: Անհրաժեշտ էր հստակեցնել ներկայացվող ապրանքը, բացառելով տարակերպ մեկնաբանությունը՝ նշելով կամ համապատասխան ԳՈՍՏ-ը կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ-ն: Արտադրող գործարանի համարժեք ՏՊ ներկայացնելու դեպքում անհրաժեշտ էր ներկայացնել նաև այդ ՏՊ-ի կրկնօրինակը՝ համաձայն սույն ընթացակարգի հրավերի:

- Մասնակցի կողմից ներկայացված հայտում բացակայում էր հավելված 1.3-ը:

v. Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետը, որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովը, 07.02.2022թ.-ին, «Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է հրավերի պայմաններին անհամապատասխան, քանի որ վերջինիս կողմից ներկայացված անհամապատասխանությունների շտկման փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է են հետևյալ անհամապատասխանությունները, մասնաորապես՝

- Մասնակցի կողմից ներկայացված հավելված 1.3-ը հաստատված չէ էլեկտրոնային ստորագրությամբ:

- Մասնակցի կողմից ներկայացված հավելված 1.1-ում ընթացակարգի 13-րդ չափաբաժնի մասով նշված է ТУ У 20.5-32365441-112:2015, սակայն վերջինիս կողմից չի ներկայացվել այդ ՏՊ-ի կրկնօրինակը, իսկ ՏՊ-ի կրկնօրինակի փոխարեն ներկայացված փաստաթղթում (паспорт качества) նշված տվյալները չեն համապատասխանում

ընթացակարգի հրավերով պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրին, մասնավորապես՝

- Մասնակցի կողմից վերը նշված փաստաթղթում (паспорт качества) բացակայում է ամրության սահմանը,

- Մասնակցի կողմից վերը նշված փաստաթղթում (паспорт качества) մեխանիկական մասնիկների մասնաբաժինը նշված է 0.025, այնինչ սույն ընթացակարգի հրավերով և Մասնակցի կողմից ներկայացված հավելված 1.1-ում նշված է մեխանիկական մասնիկների մասնաբաժինը՝ ոչ ավել 0.015%:

Հաշվի առնելով վերը նշված անհամապատասխանությունները և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 42-րդ կետը, 07.02.2022թ.-ին, Հանձնաժողովը որոշել է մերժել «էքսպորտ Օյլ» ՍՊԸ հայտը՝ Ընթացակարգի 6-րդ, 7-րդ և 12-րդ չափաբաժինների մասով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2911-2022 գրությամբ «էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը,

բ. իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

գ. ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

թ. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում՝ հղում գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին, իսկ այլ իրավաբանական անձանց դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա սահմանված ձևով և կարգով: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային

առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից Քսուքների ձեռքբերման նպատակով 17.01.2022թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-7/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյուն¬քում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը

գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից քսուքների ձեռքբերման նպատակով 17.01.2022թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-7/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.02.2022թ.-ին նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 2.3-րդ ենթակետով արձանագրվել է, որ Մասնակցի հայտը գնահատելիս գնահատող հանձնաժողովի կողմից

արձանագրվել է անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Մասնակցի կողմից ներկայացված հայտի հավելված 1.1-ում՝ 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված էր ԳOUS 6267-74 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ, 4-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված էր ԳOUS 8773-73 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ, 5-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված էր ԳOUS 16422-79 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ, 6-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված էր ԳOUS 9433-80 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ, 13-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված էր ԳOUS 3276-89 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ: Վերոնշյալ բոլոր չափաբաժինների մասով անհրաժեշտ էր հստակեցնել ներկայացվող ապրանքը, բացառելով տարակերպ մեկնաբանությունը՝ նշելով կամ համապատասխան ԳՈՍՏ-ը կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ-ն: Արտադրող գործարանի համարժեք ՏՊ ներկայացնելու դեպքում անհրաժեշտ էր ներկայացնել նաև այդ ՏՊ-ի կրկնօրինակը՝ համաձայն սույն ընթացակարգի հրավերի: Բացի այդ, Մասնակցի կողմից ներկայացված հայտում բացակայում էր նաև հավելված 1.3-ը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սակայն Հանձնաժողովը, 07.02.2022թ.-ին, «Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է հրավերի պայմաններին անհամապատասխան, քանի որ վերջինիս կողմից ներկայացված անհամապատասխանությունների շտկման փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է են անհամապատասխանություններ, մասնաորապես Մասնակցի կողմից ներկայացված հավելված 1.3-ը հաստատված չէ էլեկտրոնային ստորագրությամբ, ինչպես նաև ներկայացված հավելված 1.1-ում ընթացակարգի 13-րդ չափաբաժնի մասով նշված է ТУ У 20.5-32365441-112:2015, սակայն վերջինիս կողմից չի ներկայացվել այդ ՏՊ-ի կրկնօրինակը, իսկ ՏՊ-ի կրկնօրինակի փոխարեն ներկայացված փաստաթղթում (паспорт качества) նշված տվյալները չեն համապատասխանում ընթացակարգի հրավերով պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրին, այն է՝ Մասնակցի կողմից վերը նշված փաստաթղթում (паспорт качества) բացակայում է ամրության սահմանը, Մասնակցի կողմից վերը նշված փաստաթղթում (паспорт качества) մեխանիկական մասնիկների մասնաբաժինը նշված է 0.025, այնինչ սույն ընթացակարգի հրավերով և Մասնակցի կողմից ներկայացված հավելված 1.1-ում նշված է մեխանիկական մասնիկների մասնաբաժինը՝ ոչ ավել 0.015%:

Հաշվի առնելով վերը նշված անհամապատասխանությունները, 07.02.2022թ.-ին, Հանձնաժողովը որոշել է մերժել «էքսպորտ Օյլ» ՍՊԸ հայտը՝ Ընթացակարգի 6-րդ, 7-րդ և 12-րդ չափաբաժինների մասով:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ

մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-7/6» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության

դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2911-2022 գրությամբ «Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/84 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**